Վահան Թոթովենց

Իզաբելլա Սերրանո

Սպանիայի հարավում, Անդալուզիայում առատ է գինին և պարը: Այնտեղ մարդիկ հագնվում են ծիածանի բոլոր գույներով, ներքևում՝ սաթի դեղին շապիկը ծովի կապույտ, արյան գույն բոսոր, լայն երիզներով: Անդալուզիացիները պարում են փոթորկահույզ՝ ճիշտ ծովի ալիքների նման, գալարում են իրենց մարմինները, պարում են երազային աչքերով, պարում են ամեն օր, պարում են անվերջ և անպարտասուն: Նրանց մարմինները ճկուն են, ինչպես արաբ ձիավորի նիզակը, որ երբեմն սլացել է Անդալուզիայում, ճկուն՝ ինչպես ուռենու ճյուղն Արարատյան դաշտում: Նրանք սիրում են պարել լուսնկա գիշերներին: Երբ աստղերը թփերից պոկված սպիտակ ծաղիկների նման թափվում են մաքրամաքուր երկնքում, նրանք սիրում են պարել, պարել այդ աստղերի տակ: Նրանց ոտները կայթում են գետնի վրա՝ ինչպես մակույկը ջրում:

⁂

Իզաբելլա Սերրանոն Անդալուզիայից էր, Սևիլիայի մոտիկ գյուղերից: Նա մտավ նավ Լիսաբոնի նավահանգստից: Գնում էր Ամերիկա: Նրան ընկերակցում էր մի ագենտ, որը տեսել էր Իզաբելլա Սերրանոյին Սևիլիայի մոտիկ մի գյուղում, ժողովրդական տոներից մեկում պարելիս: Ագենտը ցիլինդրավոր, թորշոմած դեմքով, խորամանկ, փոքրիկ աչքերով, փոքրիկ ոլորված բեղերով մի մարդ էր Բուենոս-Այրեսից, որը գնացել էր Սպանիա հատկապես առևտրական նպատակներով: Երբ Իզաբելլա Սերրանոն ոտը դրեց նավի վրա, ամերիկյան թերթերի թղթակիցները շրջապատեցին ագետնին, տեղեկություններ ստացան Իզաբելլա Սերրանոյի մասին և աճապարեցին

հեռագրել Ամերիկա:

- Հարավի արևը, կարծես կաթիլ առ կաթիլ, սուզվել էր Իզաբելլա Սերրանոյի մարմնի մեջ, այնքան ողորկ, ջերմագին և անփայլ էր նրա մարմինը:

-Նրա աչքերը սև էին, պալմայի տերևների նման մուգ, երկար և սուր թարթիչներով, մազերը թափվել էին բաց ուսերի վրա, հագել էր թեթև կարմիր բլուզ, կապույտ և կարճ քթանցքներ, ծնկները բաց, կարճ և կապույտ գուլպաներով:

Ընթրիքին Իզաբելլա Սերրանոն իր ագենտի հետ միասին նստել էր սեղան: Նրանց դիմաց նստած էր մի երիտասարդ, երկար մազերով: Երիտասարդը բարի և խոհուն աչքեր ուներ: Ծխամորճը բերանին՝ նա ինչ-որ մտքերով էր տարվել, բայց երբ նշմարեց Իզաբելլային, աչքերը հառեց նրան, կարծես գտավ նա իր կորցրած մտքերի թելը: Իզաբելլան բարձրացրեց թերթերունքները և նայեց երիտասարդին: Երիտասարդը շարունակեց նայել Իզաբելլային, որ պալմայի տերևների նման մուգ, երկար և սև թարթիչներ ուներ, որոնք ստվերում էին նրա աչքերի խորքը:

Երբ Իզաբելլան ընթրիքը վերջացրեց,ոտի կանգնեց մի կարմիր խնձոր ձեռքին: Ագենտը նրա մանուշակագույն ուսնոցը նետեց նրա ուսերին: Նա դարձավ երիտասարդին և ժպտաց: Երիտասարդն անմիջապես ոտի կանգնեց, խոնարհվեց մինչև Իզաբելլան հեռացավ:

Ժպիտը երևաց Իզաբելլայի դեմքի վրա՝ ինչպես առաջին աստղն է բացվում պաղպաջուն երկնքում: Նա քայլեց և հեռացավ՝ ինչպես մակույկը ջրում: Առավոտյան նախաճաշին Իզաբելլան մենակ էր: Ծովն օրորում էր նավը թեթև փետուրի նման: Ճամփորդների իննսուն տոկոսը չէր կարողացել հեռանալ անկողնից: Մութ էր առավոտը, բայց շոգենավի ճաշադահլիճում վառվում էր ջահը: Դուրսը կատաղել էին մուգ-կապույտ կոհակները, ծեծում էին նավի կողերը:

Դոննա Իզաբելլա, եղե՞լ եք դուք Ամերիկայում, հարցրեց երիտասարդը:

Դուք որտեղի՞ց գիտեք իմ անունը:

Առավոտյան թերթից, չե՞ք կարդացել թերթը, հարցրեց երիտասարդը և երկարեց նրան նավի թերթիկը:

Իզաբելլա Սերրանոն արագորեն նայեց թերթիկի վրա և դառնալով երիտասարդին՝

–Ոչ,– ասաց, առաջին անդամն է, որ գնում եմ Ամերիկա, առաջին անգամն է, որ դուրս եմ գալիս Անդալուզիայից:

Երիտասարդն էլի նայեց նրան, նա կարծես ճանաչեց Իզաբելլա Սերրանոյին:

Նախաճաշից հետո՝ նրանք երկուսով բարձրացան վերև և կանգնեցին նավի կամրջի վրա: Ծովը մռնչում էր, փրփրերախ կոհակներ էին բարձրանում: Նրանք օրորվում էին բաց և մռայլ ծովում:

Ինչպե՞ս է ձեր անունը, հարցրեց Իզաբելլան երիտասարդին:

Էմիլ:

Ազգանո՞ւնը:

Այսքանը բավական է, ֆրանսիացի եմ վերջացրեց երիտասարդը:

Դուք խորհրդավոր մարդ եք, առանց ազգանունի,– հարեց Իզաբելլան:

Ես գաղտնի եմ գնում Ամերիկա, միայն այսքանն իմացեք, դոննա Իզաբելլա, բարի տոնով պատասխանեց երիտասարդը:

Իզաբելլան չուզեց շարունակել և խոսքը փոխելով՝ հարեց .

Ծովը կատաղի է, բայց ես սիրում եմ կատաղի ծովը: Ամերիկյան կյանքն էլ կատաղի է՝ ինչպես այս ծովը:

Դոննա Իզաբելլա, զգույշ եղեք այդ կատաղի կյանքում:

Հանկարծ մռայլվեցին Իզաբելլայի աչքերը: Ապա նա պատմեց, որ ինքը մի գյուղացի աղջիկ է, ագենտը տեսել է իրեն պարելիս, ծանոթացել, եկել է իր մոր մոտ, առատ փող է տվել և մի տարով պայմանավորվել է տանելու իրեն Ամերիկա՝ պարելու համար:

Մի տարուց պետք է վերադառնամ Անդալուզիա,– վճռական տոնով վերջացրեց Իզաբելլան:

Մի՞թե կարիք ունեիք ագենտի տված փողին, հարցրեց Էմիլը:

Այո, մեծ կարիք ունեինք. Հայրս նոր էր մեռել, քույրերս փոքր են, իսկ մայրս՝ բոլորովին անպաշտպան:

Ամերիկայում զգույշ եղեք, դոննա Իզաբելլա, Ամերիկայում այնքան փող կա, որքան գինի՝ Անդալուզիայում:

Իզաբելլան նորից նայեց Էմիլին, և Իզաբելլայի նայվածքն այնքան մռայլ էր, որքան ծովը:

Նավի ծառայողներից մեկը մոտեցավ Իզաբելլային:

Մյուսյո դը-Վալերան ձեզ խնդրում է, ասաց:

Շուտով կվերադառնամ, հարեց Իզաբելլան Էմիլին և իջավ կամրջակից ներքև:

Սանդուղքներից իջնելիս՝ քամին թոցնում էր նրա մանիշակագույն ուսնոցը, և նա նման էր թևատարած թռչող առասպելական թռչունի:

Էմիլը դեռևս կանգնած էր կամրջակի վրա և դիտում էր արևը, որ նայում էր նոր ճեղքված մի ամպի միջից, երբ Իզաբելլան վերադարձավ:

Դը-Վալերան գլուխը չի կարող բարձրացնել անկողնից:

Ինչո՞ւ է ձեզ կանչել, դոննա Իզաբելլա:

Ցանկացել է տեսնել ինձ, ուրիշ ոչինչ:

Նա նայում է ձեզ վրա՝ ինչպես վաճառականն իր ապրանքի վրա, ասաց Էմիլը:

Ինչո՞ւ եք այդպես կարծում, նա շատ բարի է դեպի ինձ և դեպի իմ ընտանիքը:

Այո, այնքան ժամանակ, որքան դուք կկարողանաք պարել, պատասխանեց Էմիլը:

52 Վ . Թոթովենց, գիրք 2 –Դուք այնքան բարի աչքեր ունեք, բայց չար բաներ եք ասում,–հարեց Իզաբելլան մռայլ և տխուր:

–Իմ ասածները չար չէն, միայն ցանկանում եմ, որ զգույշ լինեք հրդեհից, որպեսզի հանկարծ չբռնկվեն ձեր սևառատ մազերը:

–Դուք ի՞նչ գործով եք զբաղվում,– հարցրեց Իզաբելլան:

–Բանաստեղծ եմ,– պատասխանեց Էմիլը:

Արևը փայլում էր օվկիանոսի մուգ–կապտավուն ալիքների վրա, բայց Իզաբելլա Սերրանոն մռայլ էր՝ ինչպես առավոտյան ծովը:

Երեկո էր, երբ շոգենավը հասավ Նյու–Յորքի նավահանգիստը: Վիթխարի հրդեհի նման վառվում էր Նյու–Յորքը: Բոլոր ճամփորդները տախտակամածի վրա էին: Ֆրանսիացի բանաստեղծը և Անդալուզիայի գեղջկուհին կանգնել էին նավի աջակողմում և դդիտում էին ահավոր քաղաքը:

–Ահա Նյու–Յորքը,– ասաց ֆրանսիացի բանաստեղծը:

–Ես կկորչեմ այս մեծ քաղաքում,– մրմնջաց Իզաբելլան:

Ամբողջ Նյու–Յորքը ճանաչում է ձեզ հիմա,– շարունակեց բանաստեղծը,– բոլոր թերթերը հիմա հրատարակած կլինեն ձեր լուսանկարը, ձեր ագենտը շատ ճարպիկ է:

–Դուք էլի սկսեցիք ձեր չար խոսքերը:

–Ես եղել եմ այս երկրում, տեսել եմ այս երկիրը հատակից մինչև ոսկեզօծ կեղտոտությունները, էլի եմ ասում, զգույշ եղեք, դոննա Իզաբելլա, վերցրեք միայն այնքան դոլլար, որքան հարկավոր է ձեզ և ձեր ընտանիքի համար և շուտ, շատ շուտ վերադարձեք Անդալուզիա:

Նավը կանգ առավ, խարիսխները ձգվեցին վայրենի ռիթմով: Ճամփորդները բոլորն էլ իրարանցման մեջ էին, բոլորն էլ աճապարում էին դուրս գալ: Իզաբելլան և բանաստեղծը դարձան, ետ նայեցին և տեսան դը–Վալերային՝ շրջապատված նոր մարդկանցով: Այդ նոր մարդիկը էլի թղթակիցներ էին, որոնք եկել էին նավ՝ հատկապես տեղեկություններ ստանալու համար իսպանացի պարուհու մասին: Ադենտը նրանց ծանոթացրեց Իզաբելլայի հետ: իզաբելլան երկյուղով էր նայում արագախոս այդ մարդկանց: Հանկարծ շրջապատեցին Իզաբելլա Սերրանոյին լուսանկարչական գործիքներով, փայլեցին բոցավառ բանաստեղծին ր փսփսաց նրան .

–Ես ուզում եմ ձեր հասցեն իմանալ, դուք իմ բարեկամն եք:

–Այժմ հասցե չունեմ, բայց ես ձեզ կգտնեմ:

Դը–Վալերան մոտեցավ Իզաբելլային: Նրա դեմքի վրա դժգոհություն կար:

–Դուք շատ եք զբաղվում այդ թեթևամիտ բանաստեղծով,– ասաց նա:

⁂

Նյու-Յորքի «Աստորիա» հյուրանոցը, որտեղ ագենտը տեղավորեց Իզաբելլային, տխուր էր նրա համար: Նա նստել էր լուսամուտի առաջ և դիտում էր Նոր Աշխարհի մեծագույն քաղաքը: Նա հիշում էր Անդալուզիան, լուսնկա գիշերները, հիշում էր մորը և փոքրիկ քույրերին: Իզաբելլան սկսեց լաց լինել:

Դը–Վալերան չափազանց զբաղված էր իր առանձին սենյակում, ուր ընդունում էր Թատրոնական գործիչների և պայմանագրեր կնքում: Կես ժամվա մջ նա արդեն վաճառել էր Իզաբելլայի բոլոր գիշերները– պարել, անվերջ պարել:

Երբ դը–Վալերան վերադարձավ Իզաբելլայի մոտ, նրա արցունքներն արդեն սառել էին:

–Դոննա Իզաբելլա,– սկսեց դը–Վալերան,– ինչպես դիտեք, ես խոստացա ձեզ տարեկան 10000 դոլլար:

–Այո, այդպես էլ գրված է մեր պայմանագրում . եթե դրանից պակաս է լինելու, խնդրում եմ վճարեք իմ ճանապարհի ծախսը, և ես կվերադառնամ իմ մոր և քույրերի մոտ, դեպի Անդալուզիա, այնտեղ լավ էր, այնտեղ այնպես խաղաղ էր ու հանգիստ:

–Մի՛ աճապարեք, դոննա Իզաբելլա,– վրա տվեց դը-Վալերան ժպտուն և կեղծ գուրգուրանքով,– ես թեկուզ խոստացել եմ 10000 դոլլար, բայց կարող եմ վճարել ավելի, քան այդ գումարը, որովհետև մեր գործերը լավ են գնում: Ես ձեզ կվճարեմ 20000 դոլլար տարեկան:

–Ի՞նչ բարի եք,– բացականչեց Իզաբելլան ու ժպտաց: Նրա ժպիտը նման էր մռայլված ծովից հետո ծովի վրա բացվող արևին: Իզաբելլայի աչքերը դարձյալ սկսեցին փայլել՝ ինչպես Անդալուզիայում:

–Սուտ էր նա,– մրթմրթաց ինքն իրեն Իզաբելլան:

–Ես հասկանում եմ ձեզ, դոննա իզաբելլա,– հարեց դը–Վալերան,– ֆրանսիացի բանաստեղծը ձեզ ստեր էր փչում, և դուէ հավատում էիք այդ ստերին ու ահաբեկվում: Ես զգում էի, որ նա ձեզ զանազան պատմություններ էր պատմում . բայց կյանքը ցույց կտա, դե ո՞վ է ստախոսը:

–Դուք բարի եք,– հարեց Իզաբելլան անվերապահ անկեղծությամբ:

–Ահա ձեզ 10000 դոլլար իմ խոստումներից և պայմանագրից դուրս . դեռևս շատ հազարներ կլինեն, երբ հաջողություն լինի,– գոռոզությամբ հայտարարեց դը–Վալերան և հանձնեց նրան չեկը:

Իզաբելլան խնդրեց դը–Վալերայից, որ մորը հեռագրի Նյու–Յորք հասնելու մասին:

Արդեն հեռագրել եմ,– պատասխանեց դը–Վալերան,– ր հեռագրով փոխադրել եմ 2000 դոլլար:

–2000 դոլլա՞ր:

–Այո, այո, ես լիովին կկատարեմ իմ խոստումները:

Իզաբելլան ուրախությունից ոստոստեց, ինչպես նոր խաղալիքներ ստացած մանուկը:

Դը–Վալերան ներողություն խնդրեց Իզաբելլայից և հեռացավ: Իզաբելլան մնաց մենակ: Նա դարձյալ դուրս նայեց լուսամուտից ահավոր քաղաքին, և նրան թվաց, որ օրորվում է երջանիկ ու հոտավետ մի երազում:

Հանկարծ թխկացրին Իզաբելլայի սենյակի դուռը: Ներս մտավ մի համազգեստով ծառա և նրան մատուցեց իրիկնային թերթերի հավելվածները: Իզաբելլան բաց արավ թերթերը և տեսավ իր լուսանկարներն առաջին էջերում: Իզաբելլան սկսեց որոշ ատելություն զգալ դեպի ֆրանսիացի բանաստեղծը, որ ճգնել էր պղտորել իր կյանքը, որ ճգնել էր սև քողեր քաշել իր երջանկության վրա: Երբ դը–Վալերան վերադարձավ Իզաբելլայի մոտ, նա պատմեց նրան բանաստեղծի ասածները:

–Նա ասում էր,–ասաց Իզաբելլան,– որ դուք նայում եք իմ վրա՝ ինչպես վաճառականն իր ապրանքի վրա:

Դը–Վալերան հեգնորեն, բարձր և կոպիտ հռհռաց:

–Խեղճ, անմիտ բանաստեղծ . նա կարծում էր, որ փողը միևնույն նշանակությունն ունի մեծ համար՝ ինչպես քաղցած և թեթևամիտ բանաստեղծների համար:

Խոսակցությունը երկար չշարունակվեց, որովհետև ծառան նորից անհանգստացրեց նրանց, ներկայացնելով դը–Վալերային մի այցետոմս: Դը–Վալերան կարդաց այցետոմսը և անմիջապես աճապարեց դեպի ընդունելության դահլիճը:

–Ինձ ցանկանում է տեսնել Ամերիկայի ածուխի թագավորի որդին,– կես ահաբեկված արտասանեց դը–Վալերան և աճապարեց ներքև:

Իզաբելլան կասկածեց դը–Վալերայի խոսքի անկեղծությանը:

–Ի՞նչ գործ ունի ածուխի թագավորի որդին իմ ագենտի հետ,– մտածեց Իզաբելլան:

Բայց Իզաբելլան սխալվում էր: Իսկապես այցետոմսը պատկանում էր Ամերիկայի ածուխի թագավորի որդուն՝ մր . Ռոբերտ Շրայտերին:

Երիտասարդ Շրայտերը համարվում էր Նյու–Յորքի «բարձր հասարակության» ամենագալանտ մարդը: Նա մսխում էր իր հոր ոսկու դեզերը, մասնավորապես թատրոնների կուլիսներում, իր մասնավոր ապարանքում և իր անձնական նավի վրա, որը կոչվում էր «Պոսիդոն»:

Դը–Վալերան ներկայացավ մր . Շրայտերին ընդունելության դահլիճում ժպիտով և խոնարհությանմբ:

Երբ դը–Վալերան վերադարձավ դահլիճից, հայտնեց Իզաբելլային, որ իր Նյու–Յորքի առաջին ելույթից հետո՝ հյուրասիրվելու է ածուխի թագավորի որդու անձնական նավի վրա:

–Այժմ,– շարունակեց նա,– պետք է գնանք ներքև և ծանոթանանք մր . Շրայտերի հետ: Իզաբելլա Սերանոն ագենտի հետ գնաց դահլիճ ոստոստուն քայլերով: Դահլիճում դիմավորեց նրան ածուխի թագավորի որդին՝ Նյու–Յորքի բարձր հասարակության ամենագալանտ մարդը: Իզաբելլան մոռացավ ամեն ինչ, միայն հիշեց, որ այժմ երջանիկ են իր մայրը և քույրերը, որոնք այժմ փող ունեն, հիշեց, որ պարտք չունեն, հիշեց, որ իր քույրերը պարում են ուրախ՝ Անդալուզիայի լուսնկա գիշերներին:

–Ես ձեր անունը լսել եմ,– ասաց մր . Շրայտերը Իզաբելլային,– ցանկանում էի տեսնել ձեզ: Ամերիկան հյուրասեր երկիր է, մանավանդ ձեզ նման արվեստագետների համար:

Իզաբելլայի համար պարզապես ապշեցուցիչ էր ածուխի արքայի որդու պարզությունը: Նա խոսում էր հասարակ մարդու նման:

Առավոտյան Իզաբելլան և Շրայտերը շրջում էին Նյու–Յորքում: Պատերի վրա, յուրաքանչյուր փողոցում, թերթերում, կաֆեներում, տրամվայներում, ստորերկրյա տրամվայների կայարաններում, ճաշարաններում, քաղաքի ամեն մի կետում փակցված էին Իզաբելլա Սերրանոյի աֆիշաները .

ԻԶԱԲԵԼԼԱ ՍԵՐՐԱՆՈՆ

Պարելու է սպանական ֆանտաստիկ պարեր

1 . «ԱՆԴԱԼՈՒԶԻԱՅԻ ԱՐԵՎԱԾԱԳԸ»

2 . «ՍԻՐՈ ՓՈԹՈՐԻԿԸ»

3 . «ԾՈՎԸ»

Մր. Շրայտերի շոֆերը կանգ առավ: Հրդսրն գետի ափին՝ մի ճաշարանի առաջ: Մր . Շրայտերը թեթև բռնեց Իզաբելլայի թևից և ցած իջեցրեց նրան:

–Այստեղ կճաշենք, եթե հավանեք,– ասաց Շրայտերը:

–Լավ,– համաձայնեց Իզաբելլան: -- Մենք Անդալուզիայի գինի չունենք, բայց ունենք Բորդո,- հարեց Շրայտերը:

Իզաբելլան խմեց Բորդոն Անդալուզիայի գինու ցանկությամբ:

Մր. Շրայտերը երկար նայեց նրա մուգ աչքերին, ողորկ և թուխ թևերին, նայեց նրա պալմայի տերևների նման մուգ, երկար ու սուր թարթիչներին և կծեց իր ցանկափրփուր շրթունքները: Երբ վերջացրին ճաշը, մր. Շրայտերը մի հարյուրանոց նետեց սպասավորին, և նրանք դուրս եկան: Ավտոյի մեջ Իզաբելլան հեշտանք էր զգում, ամեն բան նրան երազի նման էր թվում, ամեն բան ուրախ և թեթև:

Հյուրանոցի դահլիճում դը-Վալերան դիմավորեց նրանց ժպիտով և քծնանքով:

-Կյանքը գեղեցիկ է, չէ՞,- հարցրեց նա Իզաբելլային:

Իզաբելլան չպատասխանեց, բայց ժպտաց:

-Երիտասարդ լեյդին պետք է հանգստանա,- ասաց մր. Շրայտերը:

Իզաբելլան ներողություն խնդրեց հեռանալու: Երբ նա ձեռքը երկարեց մր. Շրայտերին, սա բռնեց և երկար համբուրեց Իզաբելլայի ձեռքը՞ Իզաբելլայի հեռանալուց հետո՝

Այսպիսի երջանկության ես երբեք չեմ հանդիպել իմ կյանքում,- խոստովանեց Շրայտերը:

Դը-Վալերան ատամները բաց արած՝ ձախ ձեռքով իր փոքրիկ բեղերը ոլորեց և ժպտադեմ պատասխանեց.

-Ինչպես որ կամենում եք, մր. Շրայտեր:

Ածուխի թագավորի որդին նստեց սեղանի դիմաց և 15000 դոլլարի մի չեկ գրելով հանձնեց դը-Վալերային:

-Իսկ ձեզ կտեսնեմ հետո,- ասաց մր. Շրայտերը դը-Վալերային:

Մր. Շրայտերը հեռանալուց առաջ հանձնեց նաև մի այցետոմս՝ վրան գրած: Դը-Վալերան աճապարանքով կարդաց տոմսը-«Մի մոռանաք ծովի գիշերը»: Կարդալուց հետո՝ աճապարեց վեր: Իզաբելլան ընկել էր անկողնի վրա և հանգստանում էր:

-Դոննա Իզաբելլա,- բացականչեց դը-Վալերան, որից Իզաբելլան ընդոստ վեր ցատկեց,– Ամերիկայի ածուխի արքայի որդին սիրում է ձեզ, ահա սիրո ապացույցը:

Ագենտը նրան հանձնեց սիրո ապացույցը՝ 15000 դոլլարը և այցետոմսը:

–Չեմ հավատում– ծովի գիշերը . . . –մրմնջաց Իզաբելլան:

–Չէ՞ որ մենք նրա հյուրն ենք լինելու իր անձնական նավի վրա, ձեր առաջին ելույթից հետո,– պատասխանեց դը–Վալերան:

Իզաբելլան երկար նայեց տարածության մեջ ը ժպտաց:

Իզաբելլան իր զարդասենյակում դողում էր երկյուղալից: Հասարակությունը լցվել էր դահլիճ և լուռ սպասում էր սպանացի պարուհուն: Իզաբելլան շատ էր պարել մեծ ժողովրդական մասսաների առաջ, բայց առաջին անգամն էր, որ նա հանդես էր գալու ցիլինդրավոր և ֆրակներ հագած տարօրինակ բազմության առաջ: Դը–Վալերան մտավ զարդասենյակ և տեսնելով, որ Իզաբելլան պատրաստ է բեմ գալու, գնաց դուրս աճապարանքով: Դը–Վալերան երկու խոսք ուներ ասելու հասարակության: Իզաբելլան մտածում էր, որ վայրկյաններ են մնացել հանդես գալու: Հանկարծ լսվեց որոտընդոստ ծափահարություն դահլիճում: «Դը–Վալերան վերջացրեց», մտածեց Իզաբելլան: Նա նայեց մեծագիր հայելուն և դիտեց իրեն՝ իր մուգ աչքերով:

–Դոննա Իզաբելլա, բարձրացնում են վարագույրը:

Իզաբելլան այլևս ոչինչ չտեսավ, միայն զգաց, որ մթնշաղային բեմի վրա սահում են իր ոտները թեթևորեն և ավելի ու ավելի են արագանում հետզհետե բացվող լույսերի մեջ: Մթնշաղը պայծառանում էր, արևածագն էր, արևածագն Անդալուզիաում: Իզաբելլայի մարմինն սկսեց փոթորկվել, փոթորկվել այնպես, ինչպես արևն է փոթորկվում Անդալուզիայում, նրա թևերն ուղիղ վեր էին բարձրացած, ամբողջ մարմինը գալարվում էր վեր, ուղիղ՝ ինչպես արևի շողը, ինչպես նետը սլացիկ, դեպի վեր՝ ինչպես երկինք թռչող մարմարը գոթական կառուցվածքի: Հանկարծ Իզաբելլան կծկվեց, հատակին և սկսեց դեպի վեր բարձրանալ, հետո կանգնեց՝ գլուխը ետև գցած, իրանը՝ առաջ, սրունքները՝ կորացած, ճիշտ նման հրացանի նշանի: Շողերն ավելի առատությամբ թափվեցին բեմի վրա, և Իզաբելլան շարունակեց խռովասույզ, ալեկոծ ու խելակորույս պարը արևի ծագման:

Դահլիճը որոտաց՝ ինչպես ծովն էր որոտում մի քանի օր առաջ:

Քրտինքը կաթիլ առ կաթիլ վազում էր Իզաբելլայի քունքերից՝ ինչպես գարնանային ծովը կանաչ տերևի վրա:

Զարդասենյակում դը-Վալերան կռացավ և համբուրեց Իզաբելլայի ոտները:

Օրհնյալ է քո մայրը, դոննա Իզաբելլա, օրհնյալ է քո ծնունդը դոննա Իզաբելլա, բացականչեց դը-Վալերան:

Ծափահարությունները շարունակվում էին, Իզաբելլան երևաց բեմի վրա: Դահլիճը լցվեց ծափահարությամբ և բեմը՝ ծաղիկներով:

Երբ Իզաբելլան վերադարձավ զարդասենյակ, դը-Վալերան հայտնեց նրան, որ բեմը լցրել է ծաղիկներով ինքը՝ Ամերկայի ածուխի արքայի որդին:

Նա դահլիճո՞մն է, հարցրեց Իզաբելլան:

Մի՞թե չտեսաք նրան, աջ կողմի օթյակում:

Ոչ, ես ոչ ոքի չտեսա:

«Պոսիդոն» ը կանգնել էր Նյու Յորքի նավահանգստում և սպասում էր մր. Շրայտերի հրամանին՝ բաց ծով դուրս գալու համար: Իզաբելլա Սերրանոն, կիսամերկ, փաթաթված երկար վերարկուի մեջ, դուրս եկավ թատրոնից և մտավ մր. Շրայտերի ավտոյի մեջ: Մր. Շրայտերը վաղուց սպասում էր նրան: Նրանցից առաջ նավ էին գնացել Նյու-Յորքի «բարձր հասարակության» անդամներից մոտ հիսուն հոգի:

Նավի ջահազարդ դահլիճը լուսավորված էր տոնական օրվա նման: Երբ Իզաբելլա Սերրանոն և մր. Ռոբերտ Շրայտերը նավ մտան, հյուրերը նրանց դիմավորեցին ծափահարություններով: Սպասուհիները թարմ ծաղիկներով և բուրումնավետ ջրերով ողողեցին իսպանացի պարուհուն և Ամերիկայի ածուխի արքայի որդուն:

Իզաբելլան վերացել էր . նա զգում էր, որ այս բոլորն իր համար էր՝ իր հաղթանակը:

Դը–Վալերան շողոքորթ շնիկի նման դառնում էր մր . Շրայտերի շուրջը և ժպտալով՝ հաճոյախոսություններ անում նրան, որ մր . Շրայտերն ասել էր . «Իսկ ձեզ կտեսնեմ հետո»: Դը–Վալերան գիտեր, որ իր ծառայությունները կվարձատրվեն լիովին, որ ինքը կհագենա փողից և նվերներից: Մր . Շրայտերի կարգադրությամբ նավի փոքրիկ օրկեստրն սկսեց նվագել պարի եղանակ: Նրա այս պարն ավելի լեգենդային, ավելի սրտագին էր,քան այն պարերը, որ պարել էր այդ երեկո Բրոդուեյի հասարակության համար:

Նավը ճեղքում էր Ատլանտիայի մուգ–կապտավուն ալիքները, օրկեստրը նվագում էր, Իզաբելլան՝ պարում, հյուրերը ծափահարում էին խելահեղ, սկ մր . Շրայտերը տրորում էր ցանկություններից փրփրած իր շրթունքներն ատամներով:

Շրայտերը ծծում էր Իզաբելլայի շրթունքները, ծծում էր հարավի արևը նրա շրթունքներից, հարավի արևը, որ կաթիլ առ կաթիլ սուզվել էր նրա թուխ մարմնի մեջ:

⁂

— Հրամայիր, որ նավը քշեն մինչև Անդալուզիա,– մրմնջում էր Իզաբելլան Շրայտերի գրկում:

Իսկ Ամերիկայի ածուխի արքայի որդին ծծում էր նրաա շրթունքներից հարավի արևը, որ, կաթիլ առ կաթիլ, սուզվել էր նրա թուխ մարմնի մեջ:

Դահլիճը տակնուվրա էր: Հյուրերից ոմանք ընկել էին թավշյա հեշտաթոռների վրա և հարբածությունից չէին կարողացել վեր կենալ, սեղանի ծաղիկների թաղարները կործանվել էին և հատակին կոխոտվել, շշերը թափվել էին և կոտրտվել, պահածոների կիսադատարկ տուփերը թափված էին ամեն կողմ, մի բարձր ջրշուշան կանգնած էր դեռևս սեղանի անկյունում և տխուր նայում էր դահլիճի ավերակին:

Այդ դահլիճը տեսնողը կարող էր գուշակել այն դաժան օրգիան, որ տեղի էր ունեցել Նոր Աշխարհում Հին աշխարհի ձևով:

Առավոտյան նավը կանգ առավ Մեյնի ափերին: Իզաբելլան դուրս եկավ նավից մր . Շրայտերի հետ՝ տրորված, նման ծաղիկներին, որ կործանված էին և թափված հատակին: Իզաբելլայի աչքերի վրա պղտորության մի քող էր իջել, միայն հանդարտորեն փակվում և բացվում էին պալմայի տերևների նման մուգ, երկար ու սուր նրա թարթիչները:

⁂

Իզաբելլան շարունակեց պարել՝ համաձայն դը–Վալերայի կնքած պայմանագրի: Մր . Շրայտերը մոռացավ Իզաբելլային, դոլլարները նոր զգայություններ պարտադրեցին նրան: Դը-Վալերան ծանոթացրեց սպանացի պարուհուն նորանոր փոքր և մեծ Շրայտերների հետ:

Թափվեցին Անդալուզիայի գեղջկուհու աչքերի աստղերը հատիկ–հատիկ: Իզաբելլան սկսեց ապրել իր վազահաս տերևաթափը՝ ողբագին և աղեկտուր: Նրա ճակատից դեղին տերևներ ընկան: Նրա մարմինը կորցրեց իր ճկունությունն ու սլացիկությունը, սրունքները կապարացան, նրա արևածագի վառը չհուզեց հասարակությանը: Միայն մի քանի բարի ձեռքեր ծափահարեցին ի հիշատակ հին, վաղեմի պարուհու:

⁂

Տարիներ անցան:

Իզաբելլա Սերրանոն մնաց մենակ և տխուր:

Նրա թերթերունքները փակվում էին աչքերի վրա՝ ինչպես կափարիչն է փակվում մանկամարդ աղջկա դաղադի վրա:

Մի օր նա նստել էր իր սենյակի անկյունում, հայելին ձեռքը դիտում էր իր ավերված դեմքը, երբ մի այցետոմս ստացավ: Նրա աչքերը վայրկենաբար վառվեցին:

–Ներս, ներս հրավիրիր իմ վաղեմի բարեկամին,– ասաց իր աղախնին:

Ֆրանսիացի բանաստեղծն էր: Նրանք փաթաթվեցին իրար այնպես սեղմ, այնպես անբաժանելի՝ ինչպես լույսն ու տաքությունը:

Արցունքները խեղդվեցին Իզաբելլայի կոկորդում: Նա նայեց Էմիլին՝ թարմացած և վերածնված: Նա բարձրացրեց պալմայի մուգ, երկար ու սուր տերևների նման իր թարթիչները և գորովագին հարեց բանաստեղծին.

Դու ասում էիր՝ զգույշ եղիր առաջին քայլից, բայց ես արի առաջին և բոլոր քայլերը, մրմնջաց Իզաբելլան:

Վերադարձիր Անդալուզիա, վերադարձիր դեպի Անդալուզիայի ժողովրդական տոները, այժմ ճանաչում ես Ամերիկայի ոսկեզօծ կեղտը, շշնջաց բանաստեղծը:

Նրանք փաթաթվեցին իրար այնպես սեղմ և այնպես անբաժանելի՝ ինչպես լույսն ու տաքությունը:

1929 թ.